

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝

Հայաստանի Հանրապետություն

Իրավական ձևը՝

Փակ բաժնետիրական ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Կազմակերպության գործունեության բնույթը
ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Տնօրեն՝

Մովսես Վարդանյան

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, բացառությամբ այս եզրակացության “Վերապահումով կարծիքի հիմքեր” բաժնում ներկայացված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են 122.8 միլիարդ դրամով, որոնց գծով առկա է արժեզրկման հայտանիշ: Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 11-ում, Ընկերությունը հիմնական միջոցների գծով 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում ճանաչել է 6.2 միլիարդ դրամ գումարի չափով արժեզրկում: Մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված արժեզրկման գնահատման ճշտության վերաբերյալ, ինչպես նաև անկարող էինք ինքներս գնահատել հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ՝ Ընկերության հիմնական միջոցների և գործունեության առանձնահատկությունների պատճառով: Հետևաբար մենք անկարող էինք որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների գծով հնարավոր արժեզրկման գումարը:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության “Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար” բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք – համադրելի տեղեկատվություն

Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որը 2018թ. հունիսի 26-ին արտահայտել է վերապահումով կարծիք: Վերապահման հիմքը վերաբերվում է հիմնական միջոցների գծով ճանաչված արժեզրկման գումարի ճշտության ստուգման անհնարինությունը, որը նաև ունի ազդեցություն 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա: Տես այս եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժինը:

Այլ հանգամանք – աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն

Ընկերության 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կողմից 27.06.2019թ. -ին տրամադրվել էր վերապահումով կարծիք: Կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները ներառում են կազմակերպության ղեկավարության կողմից այդ հրապարակված ֆինանսական հաշվետվություններում շտկումներ, որոնք չեն ազդել մեր կողմից նախկին արտահայտված կարծիքի վրա:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը և կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM Վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, և ՀՀ Ֆինանսների նախարարության և Հնկերության միջև 2016թ. հունիսի 22-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Հնկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն, և չորամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Հնկերության հիմնական գործունեության՝ էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով, 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Հնկերությունը պահպանել է նշված վավերապայմանը:

10 հուլիսի 2019թ.

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան
Տնօրեն

Գնել Խաչատրյան
Աուդիտոր



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	Ծան.	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ վերահաշվարկված*
Հասույթ	5	17,437,337	27,191,598
Վաճառքի ինքնարժեք	6	(20,262,549)	(23,140,105)
Համախառն շահույթ		(2,825,212)	4,051,493
Այլ եկամուտ		472,398	478,121
Վարչական ծախսեր	7	(1,595,346)	(1,490,417)
Այլ գործառնական ծախսեր	8	(587,774)	(7,533,966)
Գործառնական վնաս		(4,535,934)	(4,494,769)
Ֆինանսական եկամուտ	9	1,274,341	572,105
Ֆինանսական ծախսեր	9	(417,441)	(258,194)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ		40,956	73,065
Վնաս մինչև հարկումը		(3,638,078)	(4,107,793)
Շահութահարկի գծով փոխհատուցում	10	445,240	425,452
Տարվա վնաս և համապարփակ ֆինանսական արդյունք		(3,192,838)	(3,682,341)

(*) Նախորդ տարվա գծով վերահաշվարկը ներկայացված է ծնթ. 28-ում:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2019թ. հունիսի 10-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մովսես Վարդանյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Ծան	31.12.2018թ. հազ.դրամ	31.12.2017թ. հազ. դրամ Վերահաշ- վարկված*	01.01.2017 հազ. դրամ Վերահաշ- վարկված*
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	11	122,797,577	77,265,332	70,286,262
Ոչ նյութական ակտիվներ	12	112,074	136,229	272,771
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճար	13	2,935,307	2,868,015	2,341,209
Այլ ֆինանսական ակտիվներ		41,804	41,804	33,825
		125,886,762	80,311,380	72,934,067
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	14	21,542,372	23,152,014	26,133,166
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	3,602,678	5,217,285	5,515,032
Բանկային ավանդներ	16	8,133,963	8,948,517	3,759,871
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	133,277	173,455	1,701,834
		33,412,290	37,491,271	37,109,903
Ընդամենը ակտիվներ		159,299,052	117,802,651	110,043,970
Պարտավորություններ				
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	18	74,814,328	32,947,334	18,691,807
Հետաձգված հարկային պարտավորություններ	19	2,159,982	2,605,222	3,916,074
Ակտիվներին վերաբերող շնորհներ	20	12,281,077	7,827,343	6,749,173
Պահուստներ	21	11,474,556	10,748,888	10,323,122
Առևտրային կրեդիտորական պարտքեր	22	-	3,539,115	-
		100,729,943	57,667,902	39,680,176
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	18	811,546	390,519	193,612
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22	8,547,060	6,943,075	14,084,500
Շահութահարկի գծով պարտավորություն		-	397,814	-
		9,358,606	7,731,408	14,278,112
Ընդամենը պարտավորություններ		110,088,549	65,399,310	53,958,288
Սեփական կապիտալ				
Կանոնադրական կապիտալ		14,663,599	14,663,599	14,663,599
Պահուստային կապիտալ		954,943	954,943	954,943
Լրացուցիչ կապիտալ		1,585,206	1,585,206	1,585,206
Կուտակված շահույթ		32,006,755	35,199,593	38,881,934
Ընդամենը սեփական կապիտալ	23	49,210,503	52,403,341	56,085,682
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		159,299,052	117,802,651	110,043,970

(*) Նախորդ տարվա գծով վերահաշվարկը ներկայացված է ծնթ. 28-ում:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են դեկլարության կողմից
2019թ. հունիսի 10-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Սովսես Վարդանյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Աիկողոսյան
Գլխավոր հաշվապահ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	Ծան.	2018թ. Հազ.դրամ	2017թ. Հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Իրացումից ստացված դրամական միջոցներ		21,363,764	31,771,201
Այլ մուտքեր		106,830	108,167
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(5,507,721)	(5,201,485)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ		(11,180,813)	(15,809,385)
Վճարված շահութահարկ		(1,161,577)	(197,000)
Վճարված այլ հարկեր և պարտադիր վճարներ		(7,285,151)	(7,684,648)
Այլ վճարումներ		(226,020)	(200,823)
Վճարված տոկոսներ		(992,042)	(419,298)
Գործառնական գործունեությունից դրամական գուտ հոսքեր		(4,882,730)	2,366,729
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր		(136,516)	(650,331)
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից մուտքեր		2,476	-
Տոկոսային եկամտից մուտքեր		1,149,327	367,892
Ավանդներից մուտք/(ելք), գուտ		939,568	(5,229,716)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր		1,954,855	(5,512,155)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Վարկերից և փոխառություններից մուտքեր		2,532,973	1,626,189
Վարկերի և փոխառությունների մարում		(62,753)	(67,949)
Շնորհներից մուտքեր		402,080	44,543
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր		2,872,300	1,602,783
Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր		(55,575)	(1,542,643)
Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություններ		15,397	14,264
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի		173,455	1,701,834
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	17	133,277	173,455

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են դեկավարության կողմից 2019թ. հուլիսի 10-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մովսես Վարդանյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվարի 2017թ.	14,663,599	954,943	1,585,206	38,881,934	56,085,682
Տարվա վնաս	-	-	-	(3,682,341)	(3,682,341)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2017թ.	14,663,599	954,943	1,585,206	35,199,593	52,403,341
Տարվա վնաս	-	-	-	(3,192,838)	(3,192,838)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2018թ.	14,663,599	954,943	1,585,206	32,006,755	49,210,503

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. հուլիսի 10-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Մովսես Վարդանյան
Գլխավոր տնօրեն



Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

1	Ընկերութան ՄԱՍԻՆ	11
2	ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	12
3	ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	15
4	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	15
5	ՀԱՍՈՒՅԹ	20
6	ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ	20
7	ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	20
8	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	20
9	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	21
10	ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ	21
11	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	22
12	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	25
13	ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ	26
14	ՊԱՇՏԱՐՆԵՐ	26
15	ԱՌԽՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ	26
16	ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ	26
17	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ	26
18	ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	27
19	ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
20	ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ	30
21	ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	30
22	ԱՌԽՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ	31
23	ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	32
24	ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ	32
25	ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33
26	ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	33
27	ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	34
28	ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԽԱԼԻ ՈՒՂՂՈՒՄ	39
	ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	40

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1 Ընկերության մասին

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) ստեղծվել է 1994թ. հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և վառելիքի նախարարության Հայկական ատոմային էլեկտրակայան» ՀՆՁՊ փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու մասին թիվ 492 որոշման հիման վրա:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արմավիրի շրջանային բաժանմունքում 1996թ. հուլիսի 29-ին՝ Հայաստանի հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերության բաժնետոմսերի 100% պատկանում է Հայաստանի հանրապետության Կառավարությանը:

Ընկերությունը գործում է հետևյալ լիցենզիաներով՝

- Էլեկտրաէներգիայի և հզորության արտադրության լիցենզիա, որը տրվել է 1999թ. հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Էներգետիկ հանձնաժողովի կողմից, վավեր է մինչև 2024թ. հունիսի 10-ը,
- Միջուկային տեղակայանքի շահագործման լիցենզիա, որը տրվել է 2011թ. ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2021թ. ապրիլի 1-ը,
- Ռադիոակտիվ նյութերի ներկրման լիցենզիա, որը տրվել է 2006թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի հանրապետության Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2026թ. սեպտեմբերի 6-ը,
- Ռադիոակտիվ նյութերի օգտագործման լիցենզիա, որը տրվել է 2006թ. մայիսի 4-ին Հայաստանի հանրապետության Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2026թ. մայիսի 4-ը:

Ընկերության գործունեությունը, այդ թվում սակագների քաղաքականությունը, կարգավորվում է Հայաստանի հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

ՀՀ Կառավարության՝ 1996թ. ապրիլի 4-ի թիվ 98 որոշման համաձայն Ընկերությունը հանդիսանում է միջուկային տեղակայանքի շահագործող և գործում է ատոմային էներգիայի ոլորտին վերաբերող միջազգային պայմանագրերի համաձայն, որոնք վավերացվել են Հայաստանի հանրապետության կողմից:

Կանոնադրության համաձայն Ընկերության հիմնական գործունեությունն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգ և արդյունավետ շահագործումն է, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրությունը, վաճառքն ու արտահանումը:

Ընկերության արտադրական հզորությունները ներառում են երկու էներգաբլոկ: Համաձայն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման՝ 1989թ. անվտանգության նկատառումներով երկու էներգաբլոկների շահագործումը դադարեցվել է: 1993թ. ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել վերսկսել ատոմակայանի գործունեությունը, որի նպատակով մշակել է հայեցակարգեր և անվտանգության միջոցառումների անհրաժեշտ գործողությունների ցանկ: 1995թ. նոյեմբերի 5-ին վերսկսել է թիվ 2 էներգաբլոկի գործունեությունը:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

Ներկայումս Հնկերությունն իրականացնում է երկու ծրագիր.

- Թիվ 2 Էներգաբյուջի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր, համաձայն 2015թ. փետրվարի 5-ին ՀՀ Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև կնքված պայմանագրի
- Էներգետիկ հատվածի ֆինանսական վերականգնման ծրագիր, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից, 2016թ. մայիսի 16-ին կնքված վարկային պայմանագիր 8615-AM: Ծրագրի նպատակն է Էներգիա արտադրող պետական ընկերությունների և Էներգիայի բաշխման մասնավոր ընկերության ֆինանսական վիճակի բարելավման միջոցով աջակցել Հայաստանի հանրապետության ջանքերը էլեկտրաէներգիայի համապատասխան և հուսալի մատակարարումը պահպանելու հարցում:

Հնկերության աշխատակիցների թվաքանակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,768 աշխատակից (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,803 աշխատակից):

2 Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 27-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հնկերության հիմնական գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա՝ (մանրամասների համար տե՛ս առանձին հոդվածների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները):

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ.

- ՖՀՄՍ 9 “Ֆինանսական գործիքներ”;
- ՖՀՄՍ 15 “Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ”;
- ՖՀՄՍԿ 22 “Արտարժույթով գործարքներ կանխավճարային եղանակով”

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Նշվածներից ՖՀՄՍ 15 “Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ” նոր ստանդարտի և ՖՀՄՍԿ 22 “Արտարժույթով գործարքներ կանխավճարային եղանակով” մեկնաբանությունների գործողության մտնելը չունի նշանակալի ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականությունում տեղի ունեցած վերադասակարգման փոփոխությունները կիրառվել են հետընթաց: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև տարբերություններ չեն առաջացել:

Ֆինանսական ակտիվներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Նախկին դասակարգում ՀՀՄՍ 39	Նոր դասակարգում ՖՀՄՍ 9	Հաշվեկշռային արժեք ըստ ՀՀՄՍ 39-ի և ՖՀՄՍ 9-ի Հազ. ՀՀ դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	173,455
Առևտրային դեբիտորական պարտքեր	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	3,291,173
Բանկային ավանդներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	8,948,517
Այլ ֆինանսական ակտիվներ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	41,804

Ֆինանսական պարտավորություններ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Նախկին դասակարգում ՀՀՄՍ 39	Նոր դասակարգում ՖՀՄՍ 9	Հաշվեկշռային արժեք ըստ ՀՀՄՍ 39-ի և ՖՀՄՍ 9-ի Վերահաշվարկված Հազ. ՀՀ դրամ
Վարկեր և փոխառություններ	Ամորտիզացված արժեքով չափվող	Ամորտիզացված արժեքով չափվող	33,337,853
Առևտրային կրեդիտորական պարտքեր	Ամորտիզացված արժեքով չափվող	Ամորտիզացված արժեքով չափվող	6,878,698

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՄ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Հրապարակում	Հրապարակման որդեգրման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը	Ժամկետը, երբ նախատեսվում է ՖՀՄՄ-ի կիրառումը	Ժամկետը, երբ Ընկերությունը պլանավորում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվության վրա
ՖՀՄՄ16 Վարձակալություն (2017)	ՖՀՄՄ 16 ստանդարտի համաձայն վարձակալը ճանաչում է վաճակալվող գույք հանդիսացող ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունը: Վաճակալվող գույք հանդիսացող ակտիվները դիտարկվում և մաշվում են այլ ոչ ֆինանսական ակտիվների նման, իսկ պարտավորության գծով հաշվարկվում է տոկոսագումար: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք ապագա վարձավճարների ներկա արժեքով:	2019թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2019թ. հունվար	Էական ազդեցություն չի նախատեսվում
ՖՀՄՄԿ 23 Շահութահարկի գծով անորոշություն (հրապարակվել է 2018թ. հունիսին)	Մեկնաբանությունը ներկայացնում է, թե ինչպես որոշել հարկվող շահույթը/վնասը, հարկային բազան, չօգտագործված հարկային վնասները, չօգտագործված հարկային զեղչերը և հարկային տոկոսադրույքները, երբ առկա է անորոշություն ՀՀՄՄ 12, “Շահութահարկեր”, ստանդարտի հաշվառման նպատակով:	Ուժի մեջ են մտնում 2019թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2019թ. հունվար	Էական ազդեցություն չի նախատեսվում

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

3 Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշակի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Դատողությունները, ենթադրությունները և գնահատումներն մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

- Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ (Ծանոթագրություն 27)
- Ատոմակայանի շահագործումից հանելու և օգտագործված միջուկային վառելիքի պահպանման պահուստների գնահատումը (Ծանոթագրություն 21):

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի էլակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող էլակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չձգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի էլակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի էլակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի էլակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4 Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույթային ռիսկ
- Արտաբժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, լնկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Լնկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Բանկային ավանդներ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Այլ ֆինանսական ակտիվներ
- Վարկեր և փոխառություններ
- Առևտրային կրեդիտորական պարտքեր

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ խմբերի

Ֆինանսական ակտիվներ

	Ամորտիզացված արժեքով չափվող	
	31.12.2018	31.12.2017
	հազար դրամ	հազար դրամ
Բանկային ավանդներ	8,133,963	8,948,517
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,852,214	3,291,173
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	133,277	173,455
Այլ ֆինանսական ակտիվներ	41,804	41,804
	11,161,258	12,454,949

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող	
	2018թ.	2017թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկեր և փոխառություններ	75,625,874	33,337,853
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,546,117	6,878,698
	82,171,991	40,216,551

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, առևտրային դեբիտորական պարտքեր, բանկային ավանդներ, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, վարկեր և փոխառություններ, առևտրային կրեդիտորական պարտքեր:

դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, առևտրային դեբիտորական պարտքեր, բանկային ավանդներ, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, վարկեր և փոխառություններ, առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին :

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության գործունեության ընդհանուր դեկավարումն իրականացվում է Տնօրենների խորհուրդի կողմից (բացառությամբ այն հարցերի որոնք վերապահված են բաժնետերերի ընդհանուր ժողովին):

Տնօրենների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով Ընկերության մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերության միակ հաճախորդը «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ն է, որի գծով առկա չէ պարտքային ռիսկ, քանի որ դեբիտորական պարտքը վճարվում է առաջացմանը հաջորդող ամսվա ընթացքում:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և բանկային ավանդներից: Ընկերությունն իր միջոցները տեղաբաշխում է միայն հայաստանյան խոշորագույն բանկերում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն առաջանում է փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառություններից ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 18-ում:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով:

Այլ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև (արտարժույթի մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով) .

	2018թ. ՀՀ դրամ	2017թ. ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	483.75	484.1
1 Եվրո	553.65	580.1

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արտարժույթային ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների ներկայացված է ստորև՝

	ԱՄՆ դոլար	
	31.12.2018թ. հազար դրամ	31.12.2017թ. հազար դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	616	490
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	616	490
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	69,212,831	29,353,164
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,454,798	6,626,312
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	75,667,629	35,979,476
Զուտ դիրքը	(75,667,013)	(35,978,986)

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը (արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 7,566,701 հազար դրամի չափով (2017թ.՝ 3,597,899 հազար դրամ):

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Դրամական միջոցների բավարարությունը նաև ապահովվում է վարկային պայմանագրերից բխող չօգտագործված վարկային միջոցների օգտագործման հաշվին (Ծանոթագրություն 18):

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ստորև ներկայացված են Հնկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը չգեղջված պարտավորու- թյուններ հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. Դրամ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Վարկեր և փոխառություններ	858,236	1,201,896	36,075,035	52,693,182	90,828,349	75,625,874
Առևտրային կրեդիտորական պարտքեր	91,319	6,454,798	-	-	6,546,117	6,546,117
	<u>949,555</u>	<u>7,656,694</u>	<u>36,075,035</u>	<u>52,693,182</u>	<u>97,374,466</u>	<u>82,171,991</u>

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը չգեղջված պարտավորու- թյուններ հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Վարկեր և փոխառություններ	503,744	547,415	12,706,672	31,539,536	45,297,367	33,337,853
Առևտրային կրեդիտորական պարտքեր	101,954	-	6,776,744	-	6,878,698	6,878,698
	<u>605,698</u>	<u>547,415</u>	<u>19,483,416</u>	<u>31,539,536</u>	<u>52,176,065</u>	<u>40,216,551</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

5 Հասույթ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Հգործության վաճառք	12,765,801	13,373,731
Էլեկտրաէներգիայի վաճառք	4,671,536	13,817,867
	17,437,337	27,191,598

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտադրված էլեկտրաէներգիայի սակագինը կազմել է 1.96 դրամ մեկ կիլովատ ժամի դիմաց (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5.65 դրամ), իսկ հգործության սակագինը կազմել է 4,632 դրամ մեկ կիլովատ հգործության նկատմամբ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,598 դրամ):

6 Վաճառքի ինքնարժեք

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Միջուկային վառելիք	7,049,188	9,800,360
Մաշվածություն և ամորտիզացիա	4,207,057	3,964,526
Հատուցումներ աշխատակիցներին	6,382,447	6,345,806
Օգտագործված նյութերի արժեք	1,133,622	1,171,339
Սպասարկման և վերանորոգման ծախսեր	780,438	1,023,137
Գազ և էլեկտրաէներգիա	491,708	532,076
Այլ	218,089	302,861
	20,262,549	23,140,105

7 Վարչական ծախսեր

	2018թ. հազ.դրամ	2017թ. հազ.դրամ
Հատուցումներ աշխատակիցներին	1,130,025	1,057,006
Մաշվածություն և ամորտիզացիա	182,762	174,615
Պարտադիր վճարներ	51,695	52,440
Գործուղման ծախսեր	51,036	46,824
Ապահովագրության ծախսեր	29,891	36,277
Փոստային և հեռահաղորդակցության ծախսեր	24,810	22,378
Ներկայացուցչական ծախսեր	9,403	23,148
Այլ	115,724	77,729
	1,595,346	1,490,417

8 Այլ ծախսեր

	2018թ. հազ.դրամ	2017թ. հազ.դրամ
Հարկեր և հարկային տույժեր	187,591	516,239
Արհմիության վճարներ	114,990	113,778
Անդամակցության վճարներ	113,950	101,822
Հատուցումներ աշխատակիցներին	53,910	76,852
Մաշվածություն և ամորտիզացիա	57,659	46,328
Հիմնական միջոցների արժեզրկում	-	6,497,546
Այլ տուգանքներ	-	126,086
Այլ	59,674	55,315
	587,774	7,533,966

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

9 Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

	2018թ. հազ.դրամ	2017թ. հազ.դրամ
Տոկոսային եկամուտ բանկային ավանդներից	1,274,341	415,176
Ֆինանսական եկամուտ կրեդիտորական պարտքի զիջումից	-	156,929
Ընդամենը ֆինանսական եկամուտ	1,274,341	572,105
Տոկոսային ծախսեր ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված վարկերի և փոխառությունների գծով	(175,194)	(140,675)
Ֆինանսական ծախս պահուստների զեղչման հակադարձումից	(136,150)	(102,362)
Ֆինանսական ծախս կրեդիտորական պարտքի զեղչման հակադարձումից	(106,097)	(15,157)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(417,441)	(258,194)
	856,900	313,911

10 Շահութահարկի գծով ծախս

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային փոխհատուցում (Ծանոթագրություն 19)	(445,240)	(1,310,852)
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	885,400
Ընդամենը շահութահարկի գծով հարկային փոխհատուցում	(445,240)	(425,452)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 20% է (2017թ.՝ 20%):

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2018թ.		2017թ.	
	հազ. Դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %	հազ. Դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Վնաս հարկումից առաջ	(3,638,078)		(4,107,793)	
Շահութահարկի գծով փոխհատուցում՝ 20%	(727,616)	20.00%	(821,559)	20.0%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր, գուտ	324,918	(9.0%)	396,107	(9.6%)
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվ վնասի գծով	163,786	(4.5%)	-	-
Հարկային օրենսդրության փոփոխության ազդեցությունը	(206,328)	5.7%	-	-
Ժամանակաշրջանի շահութահարկի գծով փոխհատուցում	(445,240)	12.2%	(425,452)	10.4%

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

11 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հոդ	Շենքեր	Շինություններ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Այլ հիմնական միջոցներ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք								
1 հունվարի 2017թ.	7,612,620	11,622,057	11,198,033	9,611,313	54,200,411	3,207,593	19,164,865	116,616,892
Ավելացումներ	-	15,736	1,813	17,308	227,962	2,697,195	14,531,894	17,491,908
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	-	(194,215)	(43,695)	-	(237,910)
Ներքին շարժեր	-	9,003	3,832	(156,681)	(2,430,241)	2,574,153	(66)	-
Վերադասակարգումներ ոչ նյութական ակտիվներից/(ակտիվներին)	-	-	-	-	(10,477)	166,667	(28,333)	127,857
31 դեկտեմբերի 2017թ.	7,612,620	11,646,796	11,203,678	9,471,940	51,793,440	8,601,913	33,668,360	133,998,747
Ավելացումներ	-	87,399	18,460	70	5,255,351	8,091,590	36,688,143	50,141,013
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	-	(26,153)	(31,518)	-	(57,671)
Վերադասակարգում պաշարների	-	-	-	-	-	-	(195,396)	(195,396)
Ներքին շարժեր	-	402,498	(870,062)	(315,541)	6,704,897	589,028	(6,510,820)	-
31 դեկտեմբերի 2018թ.	7,612,620	12,136,693	10,352,076	9,156,469	63,727,535	17,251,013	63,650,287	183,886,693

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

	Հոդ	Շենքեր	Շինություններ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Այլ հիմնական միջոցներ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Հազար դրամ								
Կուտակված մաշվածություն և արժեզրկում								
1 հունվարի 2017թ.	-	5,666,223	5,065,444	5,520,466	27,819,012	2,086,516	172,969	46,330,630
Տարվա հաշվարկ	-	650,855	508,146	370,587	2,255,514	314,253	-	4,099,355
Արժեզրկում	-	1,070,817	768,896	897,318	3,501,522	258,993	-	6,497,546
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	-	(194,034)	(42,364)	-	(236,398)
Ներքին շարժեր	-	(11,892)	(3,832)	80,604	1,593,086	(1,657,966)	-	-
Վերադասակարգումներ ոչ նյութական ակտիվներից/(ակտիվներին)	-	-	-	-	(6,809)	49,091	-	42,282
31 դեկտեմբերի 2017թ.	-	7,376,003	6,338,654	6,868,975	34,968,291	1,008,523	172,969	56,733,415
1 հունվարի 2018թ.								
Տարվա հաշվարկ	-	534,918	567,211	369,319	2,529,936	401,779	-	4,403,163
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	-	(18,762)	(28,700)	-	(47,462)
Ներքին շարժեր	-	(3,809)	(357,975)	(1,065,296)	(3,325,823)	4,752,903	-	-
31 դեկտեմբերի 2018թ.	-	7,907,112	6,547,890	6,172,998	34,153,642	6,134,505	172,969	61,089,116
Զուտ հաշվեկշռ. արժեք								
1 հունվարի 2017թ.	7,612,620	5,955,834	6,132,589	4,090,847	26,381,399	1,121,077	18,991,896	70,286,262
31 դեկտեմբերի 2017թ.	7,612,620	4,270,793	4,865,024	2,602,965	16,825,149	7,593,390	33,495,391	77,265,332
31 դեկտեմբերի 2018թ.	7,612,620	4,229,581	3,804,186	2,983,471	29,573,893	11,116,508	63,477,318	122,797,577

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Անավարտ շինարարությունը ներառում է Թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արժեքը 50,501,483 հազար դրամ գումարի չափով, որոնք ներառում են նախագծման և ուսումնասիրության աշխատանքները, համալիր հետազոտությունը, ծրագրի կառավարումը, էներգաբլոկի համակարգերին բացադրիչների մնացորդային ռեսուրսների գնահատումը, ինչպես նաև որոշակի սարքավորումներ 1,777,226 հազար դրամ գումարի չափով: 2014թ. մարտի 27-ին ՀՀ կառավարությունը վավերացրել է ատոմակայանի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետը 10 տարով երկարաձգելու ծրագիրը: Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքվել է պայմանագիր վերոնշյալ ծրագիրը ֆինանսավորելու նպատակով: Ծրագիրն իրականացվում և կառավարվում է «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ի կողմից: Երկարաձգման աշխատանքների արդյունքում ատոմակայանի շահագործման ժամկետը կերկարաձգվի մինչև 2026թ, ընդ որում երկարաձգման աշխատանքները պլանավորվում է ավարտել 2020թ. վերջին:

2018թ. կապիտալացված փոխառության ծախսումների գումարը կազմել է 1,283,594 հազար դրամ (2017թ. կազմել է 529,406 հազար դրամ), որն առաջացել է նպատակային վարկերի նկատմամբ կիրառված փոխառության ծախսումներից:

2017թ. Ընկերությունը գնահատել է իր հիմնական միջոցները անկախ գնահատողի միջոցով, որի արդյունքում ճանաչվել է 6,195,070 հազար դրամ գումարի չափով արժեզրկումից կորուստներ: Ի լրումն, Ղեկավարության՝ որոշակի սարքավորումների շահագործումը դադարեցնելու մտադրության արդյունքում ճանաչվել է 302,476 հազար դրամի արժեզրկման գծով ծախս:

Մաշվածության գծով ծախսն ըստ ֆինանսական հաշվետվությունների հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
		Վերահաշ- վարկված
Վաճառքի ինքնարժեք	4,198,582	3,954,016
Վարչական ծախսեր	155,717	107,931
Այլ գործառնական ծախսեր	48,864	37,408
	4,403,163	4,099,355

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

12 Ոչ նյութական ակտիվներ

	Բանաձևեր հազ. դրամ	Լիցենզիաներ և ապրանքանիշեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Սկզբնական արժեք			
1 հունվարի 2017թ.	830,461	164,864	995,325
Ավելացում	45,921	20,100	66,021
Վերադասակարգում հիմնական միջոցներից/միջոցներին	(164,419)	5,690	(158,729)
31 դեկտեմբերի 2017թ.	711,963	190,654	902,617
Ավելացում	60	20,100	20,160
Դուրսգրում	(40,333)	-	(40,333)
Ներքին շարժ	23,854	(23,854)	-
31 դեկտեմբերի 2018թ	695,544	186,900	882,444
Կուտակված ամորտիզացիա			
1 հունվարի 2017թ.	589,727	132,827	722,554
Տարվա հաշվարկ	68,507	17,608	86,115
Ներքին շարժ	23,117	(23,117)	-
Վերադասակարգում հիմնական միջոցներից	(42,281)	-	(42,281)
31 դեկտեմբերի 2017թ.	639,070	127,318	766,388
Տարվա հաշվարկ	28,947	15,368	44,315
Դուրսգրում	(40,333)	-	(40,333)
31 դեկտեմբերի 2018թ.	627,684	142,686	770,370
Հաշվեկշռային արժեք			
1 հունվարի 2017թ.	240,734	32,037	272,771
31 դեկտեմբերի 2017թ.	72,893	63,336	136,229
31 դեկտեմբերի 2018թ.	67,860	44,214	112,074

Ամորտիզացիայի գծով ծախսը ըստ ֆինանսական հաշվետվությունների հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Վաճառքի ինքնարժեք	8,475	10,510
Վարչական ծախսեր	27,045	66,684
Այլ գործառնական ծախսեր	8,795	8,920
	44,315	86,114

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

13 Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ

Ոչ ընթացիկ կանխավճարները տրված են «Թի Էն Ինթերնեշնլին» օգտագործված միջուկային վառելիքի համար չոր պահպանման տարաներ ձեռքբերելու նպատակով:

14 Պաշարներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Միջուկային վառելիք ռեակտորում	9,232,020	10,160,457
Միջուկային վառելիք պահեստում	7,213,600	6,812,815
Նյութեր	1,989,359	2,048,050
Պահեստամասեր	2,398,612	2,255,825
Վառելիք	134,373	138,465
Այլ նյութեր	574,408	1,736,402
	21,542,372	23,152,014

15 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,852,214	3,291,173
Կանխավճարված հարկեր	690,824	1,671,204
Կանխավճարներ և այլ մնացորդներ	59,640	254,908
	3,602,678	5,217,285

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերը հանդիսանում են «Հայկական էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ից ստացվելիք միջոցները:

16 Բանկային ավանդներ

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Դեպոզիտ տեղական խոշոր բանկում	ՀՀԴ	2019	12.76%	8,133,963	-
Դեպոզիտ տեղական խոշոր բանկում	ՀՀԴ	2018	12.75%	-	8,948,517
				8,133,963	8,948,517

17 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներ	127,398	173,287
Կանխիկը դրամարկղում	5,879	168
	133,277	173,455

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

18 Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները տրամադրվել են ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ենթավարկային պայմանագրերի շրջանակներում, որոնք ֆինանսավորվել են Ռուսաստանի Դաշնության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի հետ կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում տրամադրված միջոցների հաշվին:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված վարկերը և փոխառություններն ըստ պայմանագրերի.

	Արժույթ	Մարման ժամկետ	Պայմանագրային տոկոսադրույք (%)	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
ՌԴ միջկառավարական վարկ	ԱՄԴ	2029	3.00%	65,490,637	25,748,903
ՌԴ միջկառավարական վարկի համաֆինանսավորում	ՀՀԴ	2029	3.00%	5,830,891	3,385,313
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	ԱՄԴ	2040	3.85%*	3,722,192	3,604,261
Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	ՀՀԴ	2035	0.75%	582,154	599,376
				75,625,874	33,337,853

* Վարկի տոկոսադրույքը լողացող է և հավասար է Բազային դրույքաչափի և Փոփոխական Մաքեդի գումարին, ինչպես սահմանված է ՀՀ Կառավարության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի հետ կնքված միջև 2016թ. մայիսի 12-ին կնքված 8615-AM վարկային պայմանագրում:

Ստորև աղյուսակում բերված են վարկային պայմանագրերն ըստ ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի.

	Ոչ ընթացիկ 2018թ. հազ. դրամ	Ոչ ընթացիկ 2017թ. հազ. դրամ	Ընթացիկ 2018թ. հազ. դրամ	Ընթացիկ 2017թ. հազ. դրամ	Ընդամենը 2018թ. հազ. դրամ	Ընդամենը 2017թ. հազ. դրամ
ՌԴ միջկառավարական վարկ	64,826,545	25,473,398	664,092	275,505	65,490,637	25,748,903
ՌԴ միջկառավարական վարկի համաֆինանսավորում	5,764,595	3,345,361	66,296	39,953	5,830,891	3,385,314
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	3,703,788	3,591,954	18,404	12,307	3,722,192	3,604,261
Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	519,400	536,621	62,754	62,754	582,154	599,375
	74,814,328	32,947,334	811,546	390,519	75,625,874	33,337,853

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

ՌԴ Միջկառավարական վարկ

Համաձայն Ռուսաստանի Դաշնության և ՀՀ Կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքված պայմանագրի Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ Կառավարությանը տրամադրել է 270,000 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ միջպետական վարկ և 30,000 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհ (Ծանոթագրություն 20) Հայկական Ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ֆինանսավորման նպատակով: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկային պայմանագրի շրջանակներում չօգտագործվային վարկային միջոցները կազմել են 65,121,862 հազար դրամ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 104,958,097 հազար դրամ):

Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ

Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը 2016թ. մայիսի 16-ին կնքված 8615-AM վարկային պայմանագրի համաձայն ՀԱԷԿ ՓԲԸ-ին վերաֆինանսավորման նպատակով տրամադրել է 8,550 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ վարկ ՀՀ Էներգետիկայի ոլորտի Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման նպատակով: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկային պայմանագրի շրջանակներում չօգտագործվային վարկային միջոցները կազմել են 413,870 հազար դրամ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 534,794 հազար դրամ):

Վարկային պարտավորությունների շարժը և մնացորդները ներկայացվում են ստորև.

	2018	2017
	հազար դրամ	հազար դրամ
Տարեսկզբի մնացորդ	33,337,853	18,885,419
Դրամական միջոցների մուտքեր վարկերի ներգրավումից	2,532,973	1,626,189
Տոկոսների հաշվեգրում շահույթ վնասում	175,194	140,675
Տոկոսների հաշվեգրում – կապիտալացում հիմնական միջոցների վրա	1,283,594	529,406
Ուղղակի վճարումներ մատակարարին Ռուսաստանի դաշնության կողմից	39,350,220	12,596,168
Մայր գումարի մարում դրամական միջոցներով	(62,753)	(62,753)
Տոկոսների մարում դրամական միջոցներով	(992,042)	(419,298)
Արտարժույթով վերհաշվարկ	835	42,047
Տարեվերջի մնացորդ	75,625,874	33,337,853

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

19 Հետաձգված հարկային պարտավորություններ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին հազ. դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	(3,460,003)	451,590	(3,008,413)
Ոչ նյութական ակտիվներ	28,759	(28,759)	-
Պաշարներ	115,367	38,468	153,835
Առևտրային և այլ			
դեբիտորական պարտքեր	65,500	(65,500)	-
Տրված փոխառություններ	362,176	1,892	364,068
Առևտրային և այլ			
կրեդիտորական պարտքեր	282,979	47,549	330,528
	(2,605,222)	445,240	(2,159,982)

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին հազ. դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	(4,680,736)	1,220,733	(3,460,003)
Ոչ նյութական ակտիվներ	-	28,759	28,759
Պաշարներ	113,495	1,872	115,367
Առևտրային և այլ			
դեբիտորական պարտքեր	65,500	-	65,500
Տրված փոխառություններ	364,208	(2,032)	362,176
Առևտրային և այլ			
կրեդիտորական պարտքեր	221,459	61,520	283,979
	(3,916,074)	1,310,852	(2,605,222)

Ստորև ներկայացվում է Ընկերության չճանաչված հարկային վնասն ըստ առաջացման տարիների և գործողության ժամկետների.

Առաջացման տարի	Գործողության ժամկետ	Հարկային վնաս հազ. դրամ	Չճանաչված հետաձգված հարկային ակտիվ հազ. Դրամ
2018թ.	31/12/2023	818,932	163,786

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

20 Ակտիվների վերաբերող շնորհներ

	31.12.2018թ. հազ. դրամ	31.12.2017թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	7,827,343	6,749,173
Տարվա ընթացքում ստացված	4,878,125	1,497,783
Ճանաչված շահույթում կամ վնասում (Այլ եկամուտների կազմում)	(424,391)	(419,613)
	12,281,077	7,827,343

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 1-ում, համաձայն Ռուսաստանի Դաշնության և ՀՀ Կառավարության միջև կնքված համաձայնագրի Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ Կառավարությանը տրամադրել է միջպետական վարկ՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետը երկարաձգելու ծրագիրը ֆինանսավորելու համար: Նույն համաձայնագրով ամրագրվել է, որ Ռուսաստանի Դաշնությունը 30,000 հազար ԱՄՆ դոլարի անհատույց օգնություն է տրամադրելու Ընկերությանը վերոնշյալ ծրագրի իրականացման նպատակով:

21 Պահուստներ

	31.12.2018թ. հազ. դրամ	31.12.2017թ. հազ. դրամ Վերահաշ- վարկված	01.01.2017 հազ. դրամ Վերահաշ- վարկված
Ատոմակայանի շահագործումից հանելու պահուստ	9,418,426	9,324,993	9,222,631
Օգտագործված միջուկային վառելիքի պահպանման պահուստ	2,056,130	1,423,895	1,100,491
	11,474,556	10,748,888	10,323,122

Ատոմակայանի շահագործումից հանելու պահուստը հիմնված է ՀՀ Կառավարության կողմից սահմանված շահագործումից հանելու աշխատանքների կատարման նպատակով ստեղծված հատուկ նշանակության հաշվին մինչև էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի ակնկալվող վերջնաժամկետը կատարվելիք բոլոր ապագա տարեկան փոխանցումների գեղչված արժեքի չափով: Փոխանցումների մեծությունն ըստ ՀՀ Կառավարության 1637-Ն որոշման հաստատվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից և ներառված է էլեկտրաէներգիայի տարեկան սակագնի հաշվարկի կազմում:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստի գծով հատուկ նշանակության հաշվին վճարման ենթակա մասհանումները կազմել են համապատասխանաբար 6,610,550 հազար դրամ և 6,210,550 հազար դրամ գումար:

Օգտագործված միջուկային վառելիքի պահպանման գծով պահուստը ձևավորվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ միջուկային ռեակտորում օգտագործվող և երկու ավազաններում պահվող օգտագործված միջուկային վառելիքի գծով դեռևս չստեղծված կամ չկանխավճարված կառուցվածքների գծով գնահատված ներկա պարտավորության գեղչված արժեքի չափով:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Պահուստների գնահատման գծով կատարված հիմնական դատողությունները և ենթադրությունները բերված են ստորև.

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Զեղչման գործակից	3.0%	3.0%
Էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի ակնկալվող վերջնաժամկետ	2026թ.	2026թ.
Օգտագործված միջուկային վառելիքի պահպանման գծով պահուստի օգտագործման տարեթիվ	2020-2033թթ.	2020-2031թթ.
Տարեկան գնաճի կանխատեսումներ	2.0%	2.0%

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է պահուստների շարժը 2018թ. և 2017թ. համար.

	Ծան.	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ Վերահաշ- վարկված
Սկզբնական մնացորդ		10,748,888	10,323,122
Պահուստի ավելացում		589,518	323,404
Պահուստի զեղչման հակադարձում	9	136,150	102,362
Վերջնական մնացորդ		11,474,556	10,748,888

22 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,546,117	6,878,698
Կրեդիտորական պարտավորություններ աշխատակիցների գծով	1,991,008	1,916,606
Կրեդիտորական պարտքեր հարկերի և տուրքերի գծով	1,919	1,682,503
Այլ կրեդիտորական պարտքեր	8,016	4,383
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8,547,060	10,482,190
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր – ընթացիկ մաս	8,547,060	6,943,075
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր – ոչ ընթացիկ մաս	-	3,539,115

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային կրեդիտորական պարտքերի կազմում գնված միջուկային վառելիքի գծով պարտավորությունը մեկ գործընկերոջ նկատմամբ կազմել է 6,486,051 հազար դրամ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,768,083 հազար դրամ, որից 3,539,115 հազար դրամ գումարը դասկարգվել է ոչ ընթացիկ առևտրային կրեդիտորական պարտքերի կազմում):

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

23 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է - 14,663,599 հազար դրամ, որը բաղկացած է յուրաքանչյուրը 3,665,899.8 դրամ անվանական արժողությամբ 4,000 սովորական բաժնետոմսից:

Պահուստային կապիտալ

Կանոնադրության համաձայն Ընկերությունը պետք է կանոնադրական կապիտալի 15%-ի չափով պահուստային կապիտալ ստեղծի: Պահուստային կապիտալը ստեղծվել է կուտակված շահույթից կատարված մասհանումների մասով:

Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է բաժնետիրոջից ստացված փոխառությունների իրական արժեքի և պայմանագրային գումարի միջև տարբերությունը:

24 Կապակցված կողմերի միջև գործարքներ

Ընկերության բաժնետոմսերի 100% սեփականատեր և վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(ա) Գործարքներ բաժնետիրոջ հետ

Բաժնետիրոջից ստացված փոխառությունների և տոկոսային ծախսերի վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում և 18-ում:

(գ) Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Աշխատավարձ և այլ հատուցումներ	101,175	65,380

25 Պայմանական պարտավորություններ

25.1 Պատճառված հնարավոր վնասի համար պատասխանատվություն

«Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» Վիեննային կոնվենցիայի համաձայն Ընկերությունը որպես միջուկային կայանքի շահագործող պարտավոր է փոխհատուցել ատոմակայանի շահագործման արդյունքում պատճառված միջուկային ցանկացած վնաս: Փոխհատուցման գումարը, կարգն ու ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Վերոհիշյալ կոնվենցիայի համաձայն փոխհատուցման գումարը կարող է սահմանափակվել առնվազն 5,000,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր միջուկային պատահարի համար: Օրենսդրության համաձայն Ընկերությունը պարտավոր է ունենալ բավարար ֆինանսական միջոցներ պատճառված հնարավոր ցանկացած վնասի պատասխանատվությունը ծածկելու համար: Ընկերությունը վերոնշյալ պայմանները բավարարելու համար պետք է տարեկան 150,000 հազար դրամի չափով մասհանումներ կատարի: Նշված գումարը ներառված է Ընկերության էլեկտրաէներգիայի տարեկան սակագնում: Ընկերության ֆինանսական հաշվետվություններում այս պարտականության վերաբերյալ պահուստ չի ստեղծվել, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ միջուկային պատահարի հավանականությունը չնչին է:

25.2 Ապահովագրություն

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության գործունեության հետևանքով:

25.3 Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

25.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

26 Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և բաժնետիրոջ շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստները, լրացուցիչ կապիտալը և կուտակված շահույթը):

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	2018թ. հազ. դրամ	2017թ. հազ. դրամ
Փոխառություններ	75,625,874	33,337,853
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(133,277)	(173,455)
Հանած կարճաժամկետ բանկային ավանդներ	(8,133,963)	(8,948,517)
	67,358,634	24,215,881
Մեփական կապիտալ	49,210,503	52,403,341
Փոխառություններ/Կապիտալ հարաբերակցություն	1.37	0.46

27 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

27.1. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

27.2 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

27.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ճանաչվում են սկզբնական արժեքով: Հիմնական միջոցի սկզբնական արժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցի ապատեղակայման և քանդման ապագա անխուսափելի ծախսումների ներկա արժեքը: Համապատասխան պարտավորությունը ճանաչվում է որպես պահուստներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Ընկերության կողմից ճանաչված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը մեկը ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցներ

Օգտակար ծառայության ժամկետ

Շենքեր և շինություններ
Փոխանցող հարմարանքներ
Մեքենաներ և սարքավորումներ
Այլ

20-50 տարի
10 տարի
5-10 տարի
1-10 տարի

27.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետը կազմում է 2-5 տարի:

27.5 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հավաքվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման գուտ արժեքի նվազագույնով: Պաշարների իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարների ինքնարժեքը հաշվառվում է՝ օգտագործելով առաջին մուտք-առաջին ելք (ԱՄԱԵ) և ներառում ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Միջուկային վառելիք

Միջուկային վառելիքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է պաշարների կազմում: Վառելիքը ստացվում է հատուկ տարաներով, որոնք ռեակտորում տեղադրվելուց հետո

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

օգտագործվում են 5-6 տարի: Միջուկային վառելիքը ճանաչվում է որպես ծախս՝ հիմնվելով ամսական ինժեներական հաշվարկների և բանաձևերի վրա: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ծախսագրված գումարը համապատասխանեցվում է փաստացի օգտագործված վառելիքի ծախսին:

27.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատույցներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն իր ֆինանսական ակտիվները իրենցից ներկայացնում են ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ: Այս ակտիվները հիմնականում առաջանում է էլեկտրաէներգիայի իրացումից առևտրային դեբիտորական պարտքից, ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից գուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցման արժեքի կամ պահուստը:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առևտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետև, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առևտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Զուտ արժեքով ներկայացվող առևտրային դեբիտորական պարտքերի գծով, այդպիսի պահուստները հաշվառվում են առանձին հաշվով՝ ներառելով որպես իրացման ինքնարժեք համապարփակ արդյունքի հաշվետվությունում: Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային դեբիտորական պարտքեր, բանկային ավանդները, դրամական միջոցները եւ դրանց համարժեքները, ինչպես նաև այլ ֆինանսական ակտիվներ: Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և ցպահանջ ավանդներ բանկերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային կրեդիտորական պարտքերը:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրության ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

27.7 Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումների, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումների, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեք, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

27.8 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ արժեքի մաս: Ընկերությունն այլ փոխառության ծախսումներն ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

27.9 Ծնորհներ

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Ծնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

հետաձգված եկամուտ և սխառեմատիկորեն փոխանցվում է շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

27.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հնկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և կիրառելիության դեպքում պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

27.11 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական է, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/ (կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

27.12 Հասույթ

Կատարողական պարտականություն և հասույթի ճանաչման պահեր

Հնկերության հասույթը առաջանում է էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության տրամադրումից, որոնց գծով հասույթը ճանաչվում է վերահսկումը պատվիրատուին փոխանցելու պահին: Վերահսկման փոխանցումը հիմնականում տեղի ունի, երբ էլեկտրաէներգիան առաքվում է հաճախորդին: Վերահսկողության փոխանցման պահը որոշելու համար նման դեպքերում չի պահանջվում բարդ դատողություն: Երբ էլեկտրաէներգիան առաքվել է համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Հնկերությունը այլևս չունի տնօրինման իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք:

Գործարքի գնի որոշում և գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա

Հնկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից և, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով, ընդ որում յուրաքանչյուր ապրանքի համար ֆիքսված է միավորի գինը:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

28 Նախորդ տարիների սխալի ուղղում

Սույն ֆինանսական հաշվետվություններում նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունն ուղղվել է՝ ներառելով ատոմակայանի շահագործումից հանելու պահուստի և օգտագործված միջուկային վառելիքի պահպանման պահուստի գնահատումները 2017թ. հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ: Նշված սխալի ուղղման ազդեցությունը 2017թ. համապարփակ ֆինանսական արդյունքի հաշվետվության վրա 2017թ. համար և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2017թ. հունվարի 1-ի դրությամբ ներկայացված է ստորև.

	2016թ. դեկտեմբերի 31	Ճշգրտում	2017թ. հունվարի 1
	հազար դրամ	հազար դրամ	Վերահաշվարկված հազար դրամ
Հիմնական միջոցներ	65,773,690	4,512,572	70,286,262
Առևտրային և այլ կրեդիտորական պարտավորություններ	19,895,050	(5,810,550)	14,084,500
Պահուստներ	-	10,323,122	10,323,122
	2017թ. դեկտեմբերի 31	Ճշգրտում	2017թ. դեկտեմբերի 31
	հազար դրամ	հազար դրամ	Վերահաշվարկված հազար դրամ
Հիմնական միջոցներ	72,726,994	4,538,338	77,265,332
Առևտրային և այլ կրեդիտորական պարտավորություններ	16,692,740	(6,210,550)	10,482,190
Պահուստներ	-	10,748,888	10,748,888
	2017թ.	Ճշգրտում	2017
	հազար դրամ	հազար դրամ	Վերահաշվարկված հազար դրամ
Վաճառքի ինքնարժեք	23,242,467	(102,362)	23,140,105
Ֆինանսական ծախսեր	155,832	102,362	258,194

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Հավելված Ա – ՖՀՄՄ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք մլն ՀՀ դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Բանկային ավանդներ	8,133,963	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) տրված բանկային ավանդների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,852,214	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Վարկեր և փոխառություններ	75,625,874	Վարկերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,546,117	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ